ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09/15169-2024

«30» 07 2024թ

«Կեպ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին
(հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 31ա շենք, բն 36)
էլ. փոստ՝ minehminasian@storaket.com

Ծ Ա Ն Ու Ց Ում

(ՀՀԷՆ-ՄԱԾՁԲ-24/66 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ***«Կեպ Քոնսթրաքշն»*** ՍՊԸ-ի միջև 04.07.2024 թվականին կնքվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ա և Բ վարչական շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների համար փորձարարական մշակման (տեխնիկական առաջադրանքի կազմում) ծառայությունների թիվ ***ՀՀԷՆ-ՄԱԾՁԲ-24/66*** ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործերի կառավարման վարչությունը (պատասխանատու ստորաբաժանում) հաշվի առնելով ***«Կեպ Քոնսթրաքշն»*** ՍՊԸ-ի պայմանագրի կատարումից հրաժարվելու վերաբերյալ գրությունը՝ 23.07.2024թ. թիվ Ն/4214-2024 զեկուցագրով առաջարկել է լուծել ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ***«Կեպ Քոնսթրաքշն»*** ՍՊԸ-ի միջև 04.07.2024 թվականին կնքված թիվ ***ՀՀԷՆ-ՄԱԾՁԲ-24/66 ծածկագրով պայմանագիրը:***

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը միակողմանի լուծում է 04.07.2024 թվականին կնքված ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ա և Բ վարչական շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների համար փորձարարական մշակման (տեխնիկական առաջադրանքի կազմում) ծառայությունների թիվ ***ՀՀԷՆ-ՄԱԾՁԲ-24/66*** ծածկագրով պետական գնման պայմանագիրը, իսկ պատշաճ

ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.9-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 96 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 144 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Հարգանքով՝

Ստորագրող
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ
1205870326

2024-07-30 13:13:46 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Կատարող՝
Խորհրդական, Դավիթ Միերյան
011597223